

# Եռյակներ

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան  
Հիշողության սահմանափակում՝ 256 MB  
Կշիռը՝ 100 միավոր

## Շարադրանք

Տրված են  $n$  թիվը և  $n$  տարր պարունակող 3 զանգված՝  $a$ ,  $b$  և  $c$  : Ձեր խնդիրն է գտնել այնպիսի  $(i, j, k)$  եռյակների քանակը, որ տեղի ունենա հետևյալ պայմանը՝  $a[i] < b[j] < c[k]$  :

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է մեկ բնական  $n$  թիվ: Հաջորդ երեք տողերում տրված են համապատասխանաբար  $a$ ,  $b$  և  $c$  զանգվածները: ( $0 \leq a[i], b[i], c[i] \leq 10^9$ ) :

## Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ պայմանին բավարարող եռյակների քանակը:

## Օրինակ

Մուտք	Ելք
4 12 6 8 3 1 3 5 8 9 15 7 5	7
2 1 2 3 4 5 6	8

Առաջին օրինակում տրված պայմանին բավարարող եռյակներն են.

- (3, 5, 7)
- (3, 5, 9)
- (3, 5, 15)
- (3, 8, 9)
- (3, 8, 15)
- (6, 8, 9)
- (6, 8, 15)

Երկրորդ օրինակում պայմանին բավարարում են բոլոր եռյակները:

## Ենթախնդիրներ

- Ենթախնդիր 1 (40 միավոր)  $1 \leq n \leq 100$
- Ենթախնդիր 2 (30 միավոր)  $1 \leq n \leq 5000$
- Ենթախնդիր 3 (30 միավոր)  $1 \leq n \leq 100000$